

ցող բառ չպիտի լինել, այլ այնպիսի՝ որ յայտնէ Պարսից զօրաց ոգին որով վստահ իրենց ուժերի վերայ խաղալով և խրոխտալով կը դիմէին յափշտակելու իրենց որբը:

146. Էջ 193. տող 15. « Յանձն լիցի ձեզ ... տարցուք յաղթան » . որովհետեւ նախ Ուսնայրն է խօսողն, և երկրորդ իրենց բռնած գերիք յոյն արուեստաւորք էին՝ — յայտնի է իբրեւ բրուտ քարկոփ և որմնադիրներ, — ուստի հաւանական թուի ուղղել յաղթանս բառը՝ ի յԱղասան: Իսկ եթէ չկայ այլ բացատրութիւն ողջագոյն, այն ատեն կարելի է յաղթանս մեկնել իբր տար և ելան յաղթարեան, կամ ուղղել « աշխատութիւնս » ի գործ կաւագործութեան, և այլն:

147. Էջ 195. տող 8. « Յաջմէ զօրացն Յունաց » և նոյնպէս « յաջում թեւի » . ինչպէս կարգադրուած էր բանակը որ Մուշեղ Հայոց գնդով լինի թէ՛ Յունաց աշխարհը և թէ՛ իւր ալ բանակի ալ բնի հրամանատար: — Իսկ ի՞նչ էր ապա ընդհանուր Հայոց գնդի հրամանատարն? Եթէ չընդունինք որ Մուշեղ ամբողջ բանակի աջ թեւը կազմէր:

148. Էջ 195. տող 26. « Դու խնցեք այրեցիր գիւ » : — Ուղղ. « Դու խարեցիր տակցեր գիւ » . Ս. Ներսէս երաշխաւոր կը լինի Մուշեղի համար առ Պապն եղած ամբաստանութեանց համար, որպէս թէ նա հաւատարիմ չէ և կրնայ մատնել զբանակն և զթագաւորն՝ Պարսից, և այլն: Պապ չկարենալով մերժել Ս. Ներսէսի բարեխօսութիւնը, կը խնդրէ որ նա երդումն առնուի ի Մուշեղայ՝ որպէս զի չստէ իւր խոստման, յետոյ թողուլ մտնելու պատերազմի մէջ (էջ 194). Ուստի երբ արիւնշախանձ առիւծու պէս Մուշեղ « յառաջմուխ տագնապեալ երթային », և թագաւորի ուշքէն կորան Մուշեղի նշանները, Պապ սկսաւ կակծուն աղաղակել և բողբոջել Ներսէսի դէմ, թէ դու ալ համամիտ էիր Մուշեղի և « խարեցիր, տակցեր գիւ » : Իսկ Ս.

Ներսէս կը հանգստացնէ ասելով . « Մի արքայ, մի կարծեր. զի ոչ ստէ մեզ այրն այն » : Այսպէս կը վերականգնի իմաստը:

Հ. ԳԱՐԻԲԵԼ, ՆԱՀԱՊԵՏԻԱՆ

Շարայարկի

## Ծ Ի Ս Ա Կ Ա Ն

Պ Ա Տ Ա Ի Մ Գ Մ Մ Ա Տ Ո Յ Յ

Ե Ի

ԶԻԵՍԱՆՈՐՈՒՄ ՔԱՀԱՆԱՅԻՆ

(Նոյսիւնք. տէս էջ 442)

Քահանան որ պիտի պատարագէ պէտք է զգեստաւորուած ըլլայ, կրելով իր վրայ իրմէ ստորագոյն պաշտօնէից բոլոր զգեստները. այսպէս՝ դպրին՝ շապիկը, կիսասարկաւագին բազկին ուրարը՝ քոզպակի ձեւով, սարկաւագին ուրարը՝ փորութարի ձեւով և իւր յատուկ զգեստը շուրջառ կամ նափորտ կոչուած:

Քահանային զգեստաւորուած պատարագելու, կամ ո՛ր և է խորհուրդ մը կատարելու սովորութիւնը՝ Արաքեալներէն աւանդուած չէ. քրիստոնէութեան առաջին դարուն մէջ պաշտօնեայք իրենց պարզ զգեստով կը կատարէին Ս. Խորհուրդները: Մեր մէջ չորրորդ դարու մէջ յունական պատարագին հետ կրօնական զգեստն ալ կը մտնէ. բայց եղած են դարեր և զաւառներ՝ որոնք պէտք չեն զգացած պատարագը զգեստաւորուած կատարելու. և այդ մինչեւ Ն. Լամբրոնացոյ օրով տեսնուած է. այդ պատմաառաւ նա իր Պատարագին մեկնութեան մէջ, սաստիկ դէմ կը խօսի այդ յոռի սովորութեան և համոզման, այս կանոնաւանդութիւնն Լամբրոնացիէն վերջ շարունակուած է դեռ մէկ ու կէս դար, մինչեւ

1. Գոտին եւս դպրաց յատուկ է, ինչպէս որ ցարդ մի քանի տեղեր զպիք շապկին վրայ գոտի կը կապեն:

Յովհաննէս Արճիշեցին, վասն զի կը գրէ սա իր պատարագի մեկնութեան մէջ. « Ու մանք հակառակին և աւելորդ և անօգուտ համարին զայս բարւոց սովորութիւն զգեստուցն<sup>1</sup> »:

Քիչ շատ՝ արեւելեան ազգերու պատարագի զգեստները իրարու կը նմանին. և մերն ալ մինչեւ ժի-ժի դար ապահովապէս՝ յունական էր, ինչպէս կը վկայէ Ն. Լամբրոնացին. բայց յընթաց դարուց՝ յաւելումներով փոփոխուեցաւ պարզ քահանային զգեստաւորումը. և զիստոր յաւելումն եղաւ.

Ա. — ՍԱՂԱՒԱՐՏԸ: Թէ՛ ճիշդ դարու քահանայը սկսան ալժմու սաղաւարտը գործածել՝ մանր ըննութեանց կը կարօտի. յայտ է թէ ժի դարու մէջ զայն քահանայից զլուխը չենք գտներ, քանի որ Ն. Լամբրոնացույ հանդերձանաց աղօթքին և կահոնին մէջ չի՛ յիշատակուիր:

Ըստ Ն. Լամբրոնացույ՝ երբ քահանան շապիկը կը հագնի, գօտին կը կապէ ուրարը և բազպանները կը դնէ՝ ամենէն վերջը նափորտը կ'առնու վրան, և պատարագը կը սկսի, առանց սաղաւարտի: Բայց եթէ պատարագիչը եպիսկոպոս է՝ այն ատեն « դնէ գիւյրն » (էջ 194): Սակայն ըստ մեր ձեռագիր հաւաքածոյին՝ առանց այս բացատրութեան՝ երբ քահանայն պիտի պատարագէ՝ կիսաարկաւազունը պէտք են զգեցնել անոր « զհանդերձ սաղմոսելով »: Դնէ զգիւրն ի զլուխն (քահանայն<sup>2</sup>) և ասէ. Դիր Տէր Սաղաւարտ, և այլն:

Եթէ այդ դարուն սովորութիւն չըլլար կիւիկեցի քահանային սաղաւարտ դնել՝ անշուշտ ձեռագրին մէջ պիտի նշանակուէր

« Իսկ եթէ եպիսկոպոս լինի խորհրդածուն »՝ ղեկ զխոյրն, ինչպէս նշանակած է ուրիշ աղբիւր. յէջ 7:

Բայց Յովհաննէս Արճիշեցին, որ գրեթէ ժամանակակից է յիշեալ ձեռագրին զգեստեան՝ խոյրի գործածութիւնը միայն կաթողիկոսին և արքեպիսկոպոսաց կը վերապահէ: — Սարկաւագները՝ պիտի մըտնեն աւանդատուն « ուր զգեստ պատարագին իցէ, և զգեցցին զգեստ ըստ իւրաքանչիւր աստիճանի և պատուոյ: Զգեստ պատարարագին՝ որ թարգմանի հարանց հայր՝ և կաթողիկոսին և արքեպիսկոպոսին՝ է՝ պատմունան և նափորտ բազմախաչ. և եմփորոն ի վերայ այնորիկ հինգ խաչից զարդարեալ. և խոյր ի զլուխն: Իսկ եպիսկոպոսն՝ որ թարգմանի տեսուչ՝ նափորտ առանց խաչի, և եմփորոն: Եւ քահանայն՝ պատմունան և նափորտ զգեցցի որպէս և եպիսկոպոսն. բայց ուրար արկից գերկու ուսովն, և ո՛չ եմփորոն »: և այլն:

Յովհ. Արճիշեցույ գրածին համեմատ՝ և ո՛չ իսկ եպիսկոպոսը պիտի կարենայ խոյր դնել զլուխը ո՛ր և է խորհուրդ մատակարարելու միջոց:

Ինչ որ է՝ ասիկց կը տեսնուի՝ որ պատարագի զգեստուց քայլ առ քայլ փոփոխուիլը կիւիկիայէն տարածուած է: Լամբրոնացույ օրով կիւիկիոյ եպիսկոպոսները խոյր կը դնեն, մինչդեռ Տարօնի մէջ՝ խոյրը դեռ արքեպիսկոպոսին վերապահուած է:

Ապահովապէս ժի-ժի դարուն ընդհանուր հայ քահանայք սկսած էին սաղաւարտ գործածել, ինչպէս որ 1568թ՝ տպագրութեան մէջ յայտնի կը տեսնուի.

« Եւ մատուցեալ կիսայ սարկաւագ(ը)ն

1. Տես Մեկնութիւն Պատարագի, սպ. կալիքա 1880, էջ 28:

2. Քահանայն է որ պիտի պատարագէ:

3. Ինչպէ՞ք մեր յիշեալ ձեռագիրը այսպէս ուրիշներ կիսասարկաւագաց կու տան քահանայն հագուեցնելու պաշտօնը:

4. Յովհաննէս Արճիշեցին՝ Ներսէս Տարօնեցույ աշակերտն է, և ուսած Տարօնու Ղազարու վանքին մէջ (Տես Մատնագր. Հ. Գ. Զարեանաւեան):

5. Այս ամենահին տպագրութիւնը որ կը բովանդակէ ի սկիզբն « Ժամագիրք համառօտեալ Աղօթաւարտոց »

ի վերջոյ ունի Խորհրդատար ամբողջութեամբ, այսինքն զպրայ և սարկաւագաց երգերով. ցարդ ընդունվին անձանօք Ֆաքսած է այս տպագիրը պատարագամատոյցի նշանակութեամբ և Մատենագրութեան մէջ իսկ յիշուած չէ Խորհրդատարի կարգին մէջ. տպագրութիւն անձանօք է նաեւ Հ. Պաթրիքեանի: Ի վերջն ունի « գրեցաւ աղաթճամատուց թւ. Ռովել (= 1568) ապրիլ 27. էջերը նշանակող Քուանշան չունի, յաճախ խորագիրք կարմրագիր են: Երեւոյց մեր ուսումնասիրութեան միշտ նկատի պիտի առնենք այս թանկագին տպագրութիւնը:

զգեցուցանեն նմայ հանդերձ և դնէ ՔԱՆԱՅՆ ԶԽՈՅՐԻ ի գլուխն »:

Զեռագիր և տպագիր պատարագամատոյցը՝ կը հրամայեն պատարագիչ քահանային նախ Սաղաւարտը դնել և յետոյ շապիկը հանգնիլ. մինչդեռ Ն. Լամբրոնացիին սաղաւարտը ամենէն վերջ կը նշանակէ (ինչ որ աւելի բնական է): Թէ՛ Ն. Լամբրոնացւոյ Թէ՛ մեր ձեռագրին և Թէ՛ 1568ի տպագրութեան համաձայն՝ շապիկէն վերջ զօտին պիտի կապուի, յետոյ փորուարը և յետոյ թաղպանները պիտի զրուին: Մինչդեռ այսօր, զգեստուց համաձայն շապիկէն վերջ բնական կու գայ կամ փորուարը առնուլ և յետոյ զօտին կապել և կամ՝ թաղպանները դնել, յետոյ փորուարը և զօտին:

Զգեստաւորման կարգի փոփոխութիւնը առաջ եկած է

Բ. — ՓՈՐՈՒՐԱՐԻ այլափոխուած ձեւէն: Առաջ՝ մինչեւ իսկ անշուշտ 1568 թուականը՝ փորուարը ուրիշ բան չէր՝ բայց եթէ սարկաւագին ուրարը՝ երկու ուսերուն վրայ ձգուած. արդէն ինն նկարներուն մէջ երբ քահանայն զգեստաւորուած է՝ այդ ձեւով կը տեսնենք փորուարը՝<sup>1</sup> Եւ Յովհաննէս Արեւիկեցին քահանային համար կ'ըսէ. « բայց ուրար արկցէ զերկու ուսովն ». և այդ՝ այսօրուան փորուարն է որ համանման է յունական և լատինական փորուարին:

Երբ փորուարը այսօրուան ձեւը կ'առնուի՝ այն ատեն զգեստաւորուող քահանային բնական կու գայ զօտին փորուարին վրայ կապել<sup>2</sup>:

Գ. — ՎԱԿԱՍՆ չի յիշատակուիր նախ նեաց քով իրր մասն պատարագի զգեստուց. Նոր Հայկական բազմաբնի մէջ վու-

կուր շատ իմաստներով գործածուած կը տեսնենք, նոյն իսկ ուրարի իմաստով: Ոչ Լամբրոնացւոյ, ոչ Արեւիկեցւոյ և ոչ մեր ձեռագրին ծանօթ չէ, քանի որ անոնց մէջ վակասի համար որոշուած աղօթք մը չենք գտնիր. և դարձեալ ապահովապէս մինչեւ չորեքսասաներորդ դարու ձեռագրաց նրկարներու մէջ զգեստաւորուած քահանան առանց վակասի է: Վակասը զուտ հայկական յաւելուած մ'է, վասն զի ոչ մէկ ազգ չունի զայս. բայց թէ ո՞ր դարուն մտաւ՝ զայն պիտի չկարենանք որոշել առանց ամէն դարերու զգեստաւորուած քահանաներու նկարները առջեւնիս ունենալու: Մինչեւ այսօր հայ եկեղեցին Վակասին համար յատուկ աղօթք մը չունի. (Տես Բագրատունի Ա. քհ. վերոյիշեալ գիրքը, էջ 27) և 1568ի տպագրութեան մէջ չգտնելով Վակասի աղօթք մը՝ ասով չենք կրնար վճռել թէ այդ դարուն մէջ ալ դեռ չկար վակասի գործածութիւնը: Վարդան պատմագիր՝ Հոռմայ քահանայապետին բերանը կը դնէ սա խօսքերը ուղղուած առ հայ կաթողիկոսը. « Առաքեցի նմա (Հայոց պատրիարքին) զիմ ՎԱԿԱՍՆ և զպսակն և զԼՈՂԻԿՆ, զի զայն զգցեալ պատարագացէ մատանեաւ հանդերձ »: Հոռմայ քահանայապետը մեր ոճով վակաս չեն գործածիր. ինչ կը հասկնայ արդեօք պատմագիրը: Նոյն դէպքը միտքը կը պահէ Ստ. Ռոշքեան և կը համարի թէ Հոռմայ քահանայապետը վակաս զրկած է Գրիգոր Տղայ կաթողիկոսին:

Դ. — ՇՈՒՐՁԱՒԻ կամ ՆԱՓՈՒՏ. այս եւս, որ քահանան ամենէն վերջը վրան կ'առնուի՝ իր ձեւը փոխած է. դեռ մինչեւ չորեքսասաներորդ դարը յունական շուրջաւորն նման էր<sup>3</sup>. այսօրուան շուրջաւոր հայկա-

1. Տես նաեւ Հ. Գաթրիճեանի Պատարագամատոյցը, էջ 738, ուր կաթողիկոսը, կամ արքեպիսկոպոսը զգեստաւորուած՝ ձեռնադրութիւն կ'ընէ:

2. Այսպէս է՝ Բագրատունի Ա. քհ. « Արարողութիւն և մենութիւն խորհրդայ Ս. Պատարագին » գրքին մէջ. Տգ. Թեֆլէս, 1884, էջ 27:

3. Տգ. Վենետիկ. 1862, էջ 134; Տո. Մոսկովայի. 1861, էջ 174:

4. Տես 1337ի նկարները Սիսականի մէջ (էջ 20). ուր զգեստաւորուած Սիւնեաց մեաբաղլիաները Աւետարանը բռնելով՝ աջ ձեռքերին դուրս կը հանեն շուրջաւոր վերջնեւով, և ձախ ձեռքերին շուրջաւոր ծածկուած կը մնայ:

կան ձեւ մ'առած հինգ դարէ տառջ ընդհանրացած պիտի չըլլայ մեր մէջ:

Քահանան մինչդեռ կը զգեստաւորուի աւանդատան մէջ՝ դպիրք կը սկսին երգել « Խորհուրդ Խորին »ը զոր բարադրած է Խաչատուր Տարօնեցին: Այս եւս նորա մոտ ալ տէտը է համարել քանի որ 1568ի տպագրութիւնը չի նշանակեր զայս մինչդեռ միւս երգերը կը նշանակէ:

Հ. Բ. ՊՈՏՈՒՄԵԱՆ

## ՆՆԱԽՕՍԱԿԱՆ

## ՍՐԲՈՑ ՆՇԽԱՐՆԵՐԸ

Ամէն դարերու և ամէն կրօններու մէջ, աստուածապաշտ թէ հեթանոս, սուրբ և ընտրեալ անձանց նշխարները նուիրական համարուել և յատուկ յարգութեան նիւթ են եղեր: Այնպէս ընդունուած է, թէ այն հոգեւոր առանձին զօրութիւնը՝ որով հոսիացած էին կամ կը կարծուէին այդ անձինք, կը փոխանցուէր նաեւ անոնց վերաբերեալ իրաց, և յետ անոնց մահուան՝ անջինջ կը մնար այդ վերջնոց մէջ: Այս գաղափարին ընդհանրականութիւնն արդէն իւր ճշմարտութեան ապացոյցն է: Չանց առնելով միւս կրօնները, այդ յարգութիւնը պիտի նկատեմ հոս լոկ քրիստոնէութեան մէջ:

Նշխարք անուան ներքեւ կ'իմանանք, ինչպէս յայտնի է, նախ՝ սրբոց մարմնոյն մնացորդները, ոսկը, միս, արիւն. յետոյ այն իրեր՝ որոնք ի կենդանութեան կամ յետ մահու անոնց հետ շփուելով՝ սրբացած են, ինչպէս հագուստ, սպաս, գերեզման և այլն. և վերջապէս անոնց նահատակութեան գործիքները: Պիտի քննեմ զասոնք՝ 1, Հին օրինաց մէջ. — 2, Առաքելական դարուն. — 3, Ընդհանրական եկեղեցւոյ մէջ. — 4, Հայոց քով. — 5, Նշխարաց փոխադրութիւնը. — 6, Անոնց

պահպանութեան եղանակները. — 7, Անոնց յարգութեան ձեւերը:

Ա. — ՀՐԻՄ ՄԵՋ կար նշխարայարգութիւնը շատ հին ժամանակներէն: Յովսէփ նահապետը մեռնելու ժամանակ խնդրեց իւր սոհմակիցներէն՝ որ երբ օր մը ելնեն Եգիպտոսէն, իւր ոսկիքն ալ միասին տանին. (Խնդ. Ծ, 24), և անոնք կատարեցին իւր խնդիրը (Եւր, ԺԳ, 19): Այս գործին մէջ յատուկ պատիւ և մեծարանք մը կը տեսնենք ոսկերաց նկատմամբ, որպէս թէ կենդանի լինէին և հրճուէին իրենց ազգակցաց հետ երթալուն համար: — Մովսիսի հովուութեան ցառազարհ հրաշագործութեան այնպիսի կարողութիւն մը կը զգեսու Գորբը լեւան վրայ (Եւր, Գ, 2-6), որ մարգարէն անոր ձեռքով կը կատարէ իւր բոլոր զարմանալի գործերը. « որով արասցես նշանս » (անդ, 17): Մերթ վիշապ կը դառնայ այն. երբեմն գետոց ջրերն արեան կը փոխէ. Եգիպտոսը գորտերով ու միջատներով կը լեցնէ (անդ, Է-Ը). իւրայիւլացոց առջեւ կարմիր ծովը կը պատուէ (անդ, ԺԳ, 16). ժայռէն ջուր կը բխեցնէ (անդ, 5-6). Յետուայ յաղթանակներ շահել կու տայ (անդ, 9), և այլն: — Եղիայի մաշկակը՝ նախ իւր, ապա Եղիայի ձեռաց մէջ Յորդանան գետը բաժնեց, և անոնք միւս կողմն անցան (Գթագ. Բ, 8, 14): — Եղիա իւր ցոպը Գեեզի անուն սպասաւորին յանձնեց, որպէս զի տանի սոմնացոյն մեռեալ զաւակին երեսին վրայ դնէ և յարուցանէ (անդ, Գ, 29-31): — Յովասու օրով երբ Հրեայք մեռեալ մը կը թաղէին, և տեսան Մովաբացոց յարձակումը, ահապարելով փախչել՝ Եղիսէի գերեզմանին վրայ ձգեցին մեռեալը, որ « գնաց և մերձեցաւ յոսկրոն Եղիսէի և կենդանացաւ » (անդ, ԺԳ, 21): — Դաւիթ Աստուծոյ մասնաւոր ինձամբը ցոյց կու տայ նշխարաց վրայ՝ երբ կ'ըսէ. « պահէ զամենայն ոսկերս նոցա (արդարոց) և մի ի նոցանէ մի՛ փշրեսցի » (Սաղ. ԼԳ, 21): — Բոլոր այս օրինակաց մէջ տեսանք մեք ոսկը, հագուստ, ցուպ, կամ թէ ըսենք՝ ամէն ինչ սեպական սրբոց,